նին՝ թէ գայցէ առաւօտս յեկեղեցին ձեր նա, և մի՛ թողուք զնա, զի թէ թողցէք զնա՝ զինչ ճուր[ում] (բառ-ը կարդա՛ ճ) ի ձեզանէ առնելոց եմք։ Այս ամենայն լինէր խրատիւ և ջանիւ Թըլթըլին և Պարմախսուզին։

Ի Պէկղօզ գնացաք մեք, և ամենայն բարեկամք և սիրելիք ևս գնացեալ էին, և զկնի՝ մեք։

Բշի ԻԴ-ի[1]) երեկոյիս լու եղև թէ առին զկղզին ի ձեռաց Ֆռանկացն, որ ասի Պօղճա, և աստ ի նաւսն ամենայն մեծ ուրախութիւն արարին։

Առաւօտուս գնացին ամենեքեան և մեք մնացաք և առեալ զվարդապետն ընդ մեր և գնացաք ի Տառապիա ի դարպաս Հասան աղային և ընդ սահմանսն շրջ[եց]աք և երեկոյիս եկաք։

Դշի (25 Օգոստ.), որ մօտ էր հասարակել աւուրն, եկաք և մեք ի Պէկղօզէն աստ ի բնակութիւնս մեր, և լսաք զի Բշի երեկոյին մեռեալ Իպրահիմ Չէլէպին և առաւօտուս տարեալ թաղեալ են զնա։

Չիլհիճէ Ուրբաթ (28 Օգոստ.). եկն Տէր Դուկասն յԵրուսաղէմայ. և օրս հսապ արին ի փուռն։

Կիրակի Լ-ի[2]) ի Ղալաթա գնացի երեկոյիս Խոճա Դանիէլի դստեր հարսնիք։ Օրս զՍարգիսն և զՍէֆէրն բերաք ի տուն և գնացին։

Բշի[3]) (31 Օգոստ.). տարան տղայքն զՏէրտէրն և զՄղտսին մօտ ի Քաղկեդոն։

Դշի (1 Սեպտ.) և Դշի (2 Սեպտ.) առաւօտուն հաղորդեցաք զՄղտսին զի անկարացեալ եղև։

Կիրակի (6 Սեպտ.). բարեկենդան Սուրբ Խաչի. նօդօս էր և որչափ նաւք կայր գնացին առ Սև Ծովն։

Թ-ին[4]) օր Դշի ի գիւղն գնացին Մղտեսին և Տէր-

1) ԻԴ-ի. 2) ԼԱ-ի. 3) սեպտեմբեր ամիս օր Բշի.
4) Ժ-ին.